Մրցույթ՝ ՀՀ Սյունիքի մարզի «Տեղի Ա. Սարգսյանի անվան թիվ 1 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տեխնոլոգիա (6 դասաժամ), աշխարհագրություն (9 դասաժամ), ԹԳՀԳ (8 դասաժամ), երաժշտություն (6 դասաժամ), հայոց լեզու և գրականություն (13 դասաժամ), դասվար (17 դասաժամ), քիմիա(7 դասաժամ), ՆԶՊ (1 դրույք) ուսուցչի թափուր տեղերի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝
- դիմում (ձև 1),
- 1 լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են ս/թ նոյեմբերի 12-ից մինչև նոյեմբերի 25–ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 9:00-ից 16:00-ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:

Մրցույթը տեղի կունենա **2024 թ. դեկտեմբերի 2-ին՝ ժամը 12:00-ին**, <<Ա.Սարգսյանի անվան Տեղի N1 միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ում :

Հասցե՝ Տեղ համայնք, գ.Տեղ Ս.Բարխուդարյան 7: Տեղեկությունների համար զանգահարել 0284967-44 հեռախոսահամարով: